# ԼՐԱՑՈՒՑԻՉ ՕՐԱԿԱՐԳ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (N 10)**

12 սեպտեմբերի 2014թ. ժամը 15⁰⁰

1. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում» ծրագրի մասին:
(Օհաննես Եորդեկյան)

2. Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագրի մասին:
(Լուսինե Քոչարյան)

3. «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության սողանի թենիսի մարզասրահի տանիքի վերանորգում» ծրագրի մասին:
(Արտակ Իգիթյան)

4. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդավան համայնքի մշակութային տան դռների և պատուհանների փոփոխում» ծրագրի մասին:
(Բենիամին Աղամալյան)

5. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա, Ջիլիզա և Կաճաճկուտ համայնքներին» ծրագրի մասին:
(Հուսիկ Սարգսյան)

6. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի Սոթք համայնքի մանկապարտեզի վերանորոգում» ծրագրի մասին:
(Հուսիկ Սարգսյան)

7. «Երևանի ռոտարի ակումբ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի թիվ 16 մանկապարտեզի խոհանոցի և հարակից միջանցքի վերանորոգում» ծրագրի մասին:
(Լիլիթ Ավետիսյան)

**8. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին**
(Արման Բարխուդարյան)

8.1 Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:



8.2 Հայաստանի Հանրապետությունում Տավուշի մարզի Իջևանի քաղաքապետարանի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

8.3 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

8.4 «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

8.5 «Բարի Նպատակ» բարեգործական միություն» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

8.6 «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում բեռի ներմուծման մասին:

8.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամ):

8.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-941-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)

8.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 18-ի N Մ-676-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին **N 2** («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):

8.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 18-ի N Մ-676-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին **N 3** («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):

8.11 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 18-ի N Մ-676-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին **N 4** («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):

8.12 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-795-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն):

8.13 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի N Մ-585-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին **N 1** («Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն):

8.14 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի N Մ-585-Ա որոշմամբ հաս-

տատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին N 2 («Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն):

**9. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին**
(Արման Բարխուդարյան)

9.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամ) N 2:

9.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ):

9.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի N Մ-490-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Երևան իմ սեր» հիմնադրամ):

9.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-070-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Առաքելություն Արևելք» միջազգային օգնության հայաստանյան մասնաճյուղ):

**10. Այլ հարցեր**

10.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 17-ի N Մ-497-Ա որոշմամբ հաստատված ծրագրի ժամկետը երկարաձգելու մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին):

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հր. 10/1

## Ո Ր Ո Շ Ու Մ

___ սեպտեմբերի 2014 թվականի N Մ -            -Ա

քաղ. Երևան

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի -ի N 07/80-2/-14 և սեպտեմբերի -ի N 06/-/-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի -ի N 02/-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող՝ 109,420,000 դրամ ընդհանուր արժեքով «Որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 01511187) 2014 թվականի ապրիլի 22-ին կնքված եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացների կազմակերպում՝ 109,420,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչությանը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն:

**Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ե Լ Ե Ն**

**Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ)**
**Հայաստանի ներկայացուցչության տնօրենի**
**պաշտոնակատար Օհանես Եռրղեկյանի կողմից**

**«2» սեպտեմբերի 2014թ.**

«Որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության աշխատակազմի, նախարարության կողմից նշված թեկնածուների համար կազմակերպել առաջնորդության, անգլերեն լեզվի, TOEFL iBT, GMAT/GRE և LSAT միջազգային քննությունների, մասնագիտական որակավորման բարձրացման վերապատրաստման դասընթացներ Հայաստանի ամերիկյան համալսարանում:<br>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև տարեկան 2 մագիստրոսական և 1 բակալավրի կրթաթոշակ տրամադրել՝ նախարարության անձնակազմի աշխատակիցների համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ) (հասցե՝ 55 East, 59th Street, New York, NY 10022, ԱՄՆ): |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Երևան քաղաք, Մարշալ Բաղրամյան 40, Հայաստանի ամերիկյան համալսարան՝ կրթության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն՝ 109,420,000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակիցներ, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում սովորող և զինվորական կոչում ունեցող զինծառայողներ, նախարարության կողմից առաջարկված թեկնածուներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրը նախատեսվում է սկսել 2014 թվականի սեպտեմբերին և ավարտել 2018 թվականի հունիս ամսին: |

Հր. 10/1

1

| | | | |
|---|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014թ. սեպտեմբեր-2018թ. հունիս ամիսների ընթացքում նախատեսվում է Հայաստանի ամերիկյան համալսարանից ձեռք բերել հետևյալ դասընթացները և ծառայությունները՝ 109,420,000 դրամ ընդհանուր արժողությամբ.<br>-ՀԱՀ առաջնորդության դասընթացներ I և II,<br>-Անգլերեն լեզվի դասավանդողների ուսուցում,<br>-Անգլերեն լեզվի, TOEFL iBT և մաթեմատիկայի նախապատրաստական կուրսեր փնտակոչիկների համար,<br>-Նախարարության քաղ. ծառայողների և զինվորական անձնակազմի վերապատրաստման և որակավորման դասընթացներ,<br>-ՀԱՀ նախապատրաստական կուրսեր ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակիցների համար,<br>-Տարեկան 2 նոր մագիստրոսական կրթաթոշակներ,<br>-Տարեկան 1 նոր բակալավրի կրթաթոշակ,<br>-Ողջ ուսուցման փաթեթի կառավարում և համակարգում: | |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 2014թ. սեպտեմբերի 1-ից 2015թ. հունիսի 30-ը՝<br><br>-ՀԱՀ առաջնորդության դասընթացներ I և II՝ 4,570,000 դրամ,<br>-Անգլերեն լեզվի դասավանդողների ուսուցում՝ 1,120,000 դրամ,<br>-Անգլերեն լեզվի, TOEFL iBT և մաթեմատիկայի նախապատրաստական կուրսեր փնտակոչիկների համար՝ 4,780,000 դրամ,<br>-Նախարարության քաղ. ծառայողների և զինվորական անձնակազմի վերապատրաստման և որակավորման դասընթացներ՝ 4,150,000 դրամ,<br>-Ողջ ուսուցման փաթեթի կառավարում և համակարգում՝ 2,100,000 դրամ,<br>-ՀԱՀ նախապատրաստական կուրսեր ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակիցների համար՝ 1,250,000 դրամ,<br>- Տարեկան 2 մագիստրոսական կրթաթոշակներ՝ 2,500,000 դրամ,<br>- Տարեկան 1 բակալավրի կրթաթոշակ՝ 1,050,000 դրամ: | 21,520,000 դրամ |
| | | 2015թ. հուլիսի 1-ից -2016թ. հունիսի 30-ը՝<br><br>-ՀԱՀ առաջնորդության դասընթացներ I և II՝ 4,570,000 դրամ,<br>-Անգլերեն լեզվի դասավանդողների ուսուցում՝ 1,120,000 դրամ,<br>-Անգլերեն լեզվի, TOEFL iBT և մաթեմատիկայի նախապատրաստական կուրսեր փնտակոչիկների համար՝ 4,780,000 դրամ,<br>-Նախարարության քաղ. ծառայողների և զինվորական անձնակազմի վերապատրաստման և որակավորման դասընթացներ՝ 4,150,000 դրամ,<br>-Ողջ ուսուցման փաթեթի կառավարում և համակարգում՝ 2,100,000 դրամ,<br>-ՀԱՀ նախապատրաստական կուրսեր ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակիցների համար՝ 1,250,000 դրամ,<br>-Տարեկան ևս 2 մագիստրոսական կրթաթոշակներ՝ 5,000,000 դրամ,<br>- Տարեկան ևս 1 բակալավրի կրթաթոշակ՝ 2,100,000 դրամ: | 25,070,000 դրամ |
| | | 2016թ. հուլիսի 1-ից -2017թ. հունիսի 30-ը՝<br><br>ՀԱՀ առաջնորդության դասընթացներ I և II՝ 4,570,000 դրամ,<br>-Անգլերեն լեզվի դասավանդողների ուսուցում՝ 1,120,000 դրամ,<br>-Անգլերեն լեզվի, TOEFL iBT և մաթեմատիկայի նախապատրաստական կուրսեր փնտակոչիկների համար՝ 9,550,000 դրամ,<br>-Նախարարության քաղ. ծառայողների և զինվորական անձնակազմի վերապատրաստման և որակավորման դասընթացներ՝ 4,150,000 դրամ, | 30,890,000 դրամ |



| | | | |
|---|---|---|---|
| | | -Ողջ ուսուցման փաթեթի կառավարում և համակարգում՝ 2,100,000 դրամ,<br>-ՀԱՀ նախապատրաստական կուրսեր ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակիցների համար՝ 1,250,000 դրամ,<br>-Տարեկան ևս 2 մագիստրոսական կրթաթոշակներ՝ 5,000,000 դրամ,<br>- Տարեկան ևս 1 /նոր/ բակալավրի կրթաթոշակ՝ 3,150,000 դրամ: | |
| | | 2017թ. հուլիսի 1-ից -2018թ. հունիսի 30-ը՝<br><br>ՀԱՀ առաջնորդության դասընթացներ I և II՝ 4,570,000 դրամ,<br>-Անգլերեն լեզվի դասավանդողների ուսուցում՝ 1,120,000 դրամ,<br>-Անգլերեն լեզվի, TOEFL iBT և մաթեմատիկայի նախապատրաստական կուրսեր փնտակոչիկների համար՝ 9,550,000 դրամ,<br>-Նախարարության քաղ. ծառայողների և զինվորական անձնակազմի վերապատրաստման և որակավորման դասընթացներ՝ 4,150,000 դրամ,<br>-Ողջ ուսուցման փաթեթի կառավարում և համակարգում՝ 2,100,000 դրամ,<br>-ՀԱՀ նախապատրաստական կուրսեր ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակիցների համար՝ 1,250,000 դրամ<br>-Տարեկան ևս 2 մագիստրոսական կրթաթոշակներ՝ 5,000,000 դրամ:<br>- Տարեկան ևս 1 բակալավրի կրթաթոշակ՝ 4,200,000 դրամ: | 31,940,000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում | |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ կրթության նախարարություն | |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչական ժողովի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով: | |

Կազմեց Լենա Բաղդասարյան
ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության տնօրենի տեղակալ ֆինանսական գծով
51-22-50, 51-22-51

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ար. 10/1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

09.09.2014թ. № 07/80-2/13981-14

Ձեր № ______________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 04.09.2014թ. N 15/15.6/14591-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան,
հեռ. 011-91-05-49

034/27625-14
09.09.2014թ.

---

Ար. 10/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

N 06/3-3/13951-14
09.09.2014թ.

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 04.09.2014թ. թիվ 15/15.6/14591-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544648

034/27534-14
09.09.2014թ.

Թ. 10/1

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078, Երևան, Հալաբյան 41ա, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

10.09.2014 N 02/6768-14

Ձեր N ________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 4-ի 15/15.6/14591-14 թվակիր հանձնարարականի հայտնում ենք, որ «Հայկական բարեգործական ընդհանուր միության» Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ.՝ (010) 380-227

035/27761-14
10.09.2014 թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թ. 10/2

_____ սեպտեմբերի 2014 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԻԱՎ-ի ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի -ի N 3/3.8-1/, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի -ի N 02/-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի -ի N ԴԴ/22/, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի -ի N ՎՄ/3-4/ եզրակացությունները* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող՝ 45,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագիրը (կցվում է):

2. Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
Հայկական Կարմիր խաչի ընկերության
Գլխավոր քարտուղարի՝ Աննա Եղիազարյանի կողմից
«26» օգոստոսի 2014թ.

ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում ծրագիրը նպատակ ունի բարձրացնել երիտասարդների իրազեկվածությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ հիվանդության, փոխանցման ուղիների, ախտորոշման և բուժման վերաբերյալ, ինչը կնպաստի սեփական առողջության նկատմամբ պատասխանատվության բարձրացմանը և սեռական ճիշտ վարքագծի ձևավորմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով |
| 3. | Բարեգործը | Ամերիկյան Կարմիր խաչ |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Երևան, Վանաձոր և Գյումրի քաղաքներ, հանրային առողջապահության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 45.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ |



| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | 15-23 տարեկան երիտասարդներ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014 Հուլիս 1-ից – 2015 Հունիս 30 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրն ունի հետևյալ ակնկալվող արդյունքները՝<br><br>1. ՄԻԱՎ/ՁԻԱՀ վերաբերյալ տեղեկատվության տարածում և 15-23 տարեկան երիտասարդների և երիտասարդ զույգերի շրջանում իրազեկվածության բարձրացում<br>2. ՄԻԱՎ-ի կանխարգելման ոլորտում ՀԿԽԸ կարողությունների ամրապնդում<br><br>Ծրագրի շրջանակներում ակնկալվող արդյունքներին հասնելու համար նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝<br><br><u>Ակնկալվող արդյունք 1</u><br><br>1.1 Կրթական դասընթացների իրականացում 15-23 տարիքային խմբի թվով 200 կամավորների համար, որոնք հավասարը հավասարին սկզբունքով կրթական հանդիպումներ են կազմակերպելու իրենց հասակակիցների շրջանում, ժամանակահատվածը՝ 2014թ. հոկտեմբերի 1-ից – 2014թ. նոյեմբերի 30-ը: Ընդհանուր արժողությունը՝ 11500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: |

| | | |
|---|---|---|
| | | 1.2 Հավասարը հավասարին սկզբունքով կրթական հանդիպումների իրականացում 15-23 տարիքային խմբի բնակչության խմբերի շրջանում, ժամանակահատվածը՝ 2014թ. դեկտեմբերի 1-ից 2015 թ. մայիսի 31-ը:<br>Ընդհանուր արժողությունը՝ 4200 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:<br>1.3 Կրթական դասընթացների իրականացում երիտասարդ ընտանիքների շրջանում՝ մինչև 140 հոգի, ժամանակահատվածը՝ 2014թ. նոյեմբերի 1-ից 2014թ. նոյեմբերի 30-ը, 2015թ. ապրիլ 1-ից 2015թ. ապրիլի 30-ը:<br>Ընդհանուր արժողությունը՝ 3400 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:<br>1.4 Կրթական դասընթացների իրականացում դասախոսների շրջանում՝ մինչև 40 հոգի, ժամանակահատվածը՝ 2014թ. հոկտեմբերի 1-ից 2014թ. հոկտեմբերի 31-ը, 2015թ. մարտ 1-ից 2015թ. մարտի 31-ը:<br>Ընդհանուր արժողությունը՝ 2280 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:<br>1.5 Խորհրդատվությունների իրականացում Երևանի, Գյումրու և Վանաձորի խորհրդատվական կենտրոններում, ժամանակահատվածը՝ 2014թ. հուլիս 1-ից - 2015թ. հունիսի 30-ը :<br>Ընդհանուր արժողությունը՝ 1200 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:<br>1.6 Հանրային միջոցառումների կազմակերպում, թվով երկու, նվիրված ՁԻԱՀ-ի համաշխարհային և ՁԻԱՀ-ից մահացածների հիշատակի օրերին, համապատասխանաբար՝ 2014թ. դեկտեմբերի 1-ը, և 2015թ. մայիսի 3-րդ կիրակին:<br>Ընդհանուր արժողությունը՝ 2020 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ : |



| | | |
|---|---|---|
| | | Ակնկալվող արդյունք 2<br>2.1 Դասընթացների կազմակերպում և իրականացում ՀԿԽԸ աշխատակիցների և կամավորների համար ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում, ժամանակահատվածը՝ 2014թ. հոկտեմբեր 1-ից 2015թ. ապրիլի 30-ը:<br>Ընդհանուր արժողությունը՝ 6000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:<br>2.2 Ծրագրի շրջանակներում մշակված նյութերի և ձեռք բերված փորձի տարածում գործընկերների շրջանում, ծրագրի ընթացքում ակտիվ կամավորների հետ հանդիպումների, ծրագրի վերաբերյալ ընթացիկ քննարկումների կազմակերպում, կամավորների խրախուսում, ժամանակահատվածը՝ 2014թ. սեպտեմբերի 1-ից 2015թ. մայիսի 31-ը:<br>Ընդհանուր արժողությունը՝ 9100 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները հիմնականում կրթական, իրազեկման և խորհրդատվական են, ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել և պատրաստել կրթական և իրազեկման նյութ՝ 900 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, հանդիպումների և կրթական միջոցառումների ընթացքում մասնակիցների սննդի ապահովումը և գրենական պիտույքների ընդհանուր արժողությունը 7600 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ է, ծրագրի կառավարման և իրականացման վերաբերյալ ակտիվ կամավորների և աշխատակազմի համար ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում ուսուցողական դասընթացների համար նախատեսված գործուղման ծախսերի ընդհանուր արժողությունը 5100 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ է, նախատեսվում է նաև ակտիվ կամավորների համար խրախուսական նվերների ձեռք բերում՝ 500 ԱՄՆ |

Ճ. 10/2

| | | |
|---|---|---|
| | | դոլարին համարժեք դրամ արժեքով և պահպանակների ձեռք բերում թվով 12000 հատ, 480 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական և պահպանման ծախսերը, նախատեսված 2014թ. հուլիսի 1-ից 2015թ. հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածի համար, կազմում են 5300 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Դրանք ներառում են ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ ծախսերը, կապի և կոմունալ ծախսերը: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը իրականացվում է կրթական հաստատությունների հետ անմիջական համագործակցությամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տրամադրել ամսական, եռամսյակային և ավարտական հաշվետվություններ Ամերիկյան Կարմիր խաչին, ինչպես նաև կատարվելու են մոնիթորինգային այցեր նվիրատուների կողմից: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է իրականացվող գործողությունների անմիջական վերահսկում: Ներկայացվելու են հաշվետվություններ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ըստ սահմանված կարգի: |

դր. 10/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

դր. 10/2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

3.09.2014թ. № 07/80-2/13483

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.08.2014թ. N 15/15.8/14286-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան,
հեռ. 011-91-05-29

034/27055-14

դր. 10/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0078, Երևան, Հալաբյան 41ա, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

1.09.2014թ N 02/6432-14

Ձեր N ________

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 29-ի 15/15.8/14286-14 թվակիր հանձնարարականի հայտնում ենք, որ «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

Կատարող՝ Մարիամ Սահակյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 380-227

035/26743-14

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

**РЕСПУБЛИКА АРМЕНИЯ МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ**

**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА**

**REPUBLIC OF ARMENIA MINISTRY OF EDUCATION AND SCIENCE**

**DEPUTY MINISTER**

դր. 10/2

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 03 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07-1/20134-14 3 09 2014

*ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի օգոստոսի 29-ի №15/15.8/14286-14 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

***Մ.ՄԿՐՏՉՅԱՆ***

կատ. Ն.Սահակյան
հեռ. 524777

031/27059-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի   Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

N 06/3-3/13381-14   մր. 10/2
2. 09. 2014թ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 29.08.2014թ. թիվ 15/15.8/14286-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544648

034/26882-14

---

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

մր. 10/3

**_____ սեպտեմբերի 2014 թվականի N Մ-        - Ա**
**քաղ. Երևան**

**«ՔՐՈՆԻՄԵՏ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ ՄԱՐԶԱՍՐԱՀԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի-ի N 3/3.8-1/ և սեպտեմբերի –ի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի -ի N 02/, Հայաստանի եզրակացությունները, **ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 8,784,534 դրամ արժողությամբ «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության սեղանի թենիսի մարզասրահի տանիքի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ակոռ-շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03811085) 2014 թվականի օգոստոսի 1-ին կնքված N CCF-1-CT/2/2014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևանի Ագաթանգեղոս փողոցի 6 հասցեում գտնվող «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացում 8,784.534 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն:

Ձ. 10



| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014թ.-ի օգոստոսի 1-ից 2014թ. սեպտեմբերի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է իրականացնել վերանորոգման աշխատանքներ 2014թ.-ի օգոստոսի 1-ից 2014թ. սեպտեմբերի 30-ը: Ընդհանուր բյուջեն կազմում է 8.784.534 դրամ: Նյութական մասի արժեքը ընդհանուրի մեջ կազմում է մոտ 5.000.00: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի վերանորոգման աշխատանքների իրականացման համար պայմանագիր է կնքվել «Ակոռշին» ՍՊԸ հետ, որի արժեքը կազմում է 8.784.534 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամը համագործակցում է ՀՀ Սեղանի թենիսի ֆեդերացիայի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Շինարարական աշխատանքների վերահսկողությունը կիրականացվի «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Ծրագրի իրականացման հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

Ձ. 10/3

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Քրոնիմետ բարեգործական հիմնադրամի
Տնօրեն Աննա Սեդրակյան
01 օգոստոսի 2014թ.

«Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության սեղանի թենիսի մարզասրահի տանիքի վերանորոգում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է վերանորոգել «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության մոտ 740 քառ. մետր մակերեսով սեղանի թենիսի մարզասրահի տանիքը, որը շարքից դուրս է եկել: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Հասցե՝ Երևան, Այգեստան 5-րդ փող., տուն 15 ՀՎՀՀ 02600555, հեռախոս՝ 55-43-05, 098 98-99-13 |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Հասցե՝ Երևան, Այգեստան 5-րդ փող., տուն 15 ՀՎՀՀ 02600555, հեռախոս՝ 55-43-05, 098 98-99-13 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպություն: Հասցեն՝ ք. Երևան, Ագաթանգեղոսի 6: Բնագավառը՝ սպորտ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 8.784.534 (ութ միլիոն յոթ հարյուր ութսունչորս հազար հինգ հարյուր երեսունչորս) դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Անհրաժեշտ գումարները առկա են հիմնադրամի հաշվին: Ծրագրի իրականացման համար հատկացված ֆոնդերը նախատեսվում է ծախսել մինչև 2014թ. սեպտեմբերի 30-ը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպություն: Հասցեն՝ ք. Երևան, Ագաթանգեղոսի 6: |

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**սեպտեմբերի 2014 թվականի N Մ- -Ա** Հր. 10/4

**քաղ. Երևան**

**«ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՆ ԴՌՆԵՐԻ ԵՎ ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓԱԽՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի -ի N 07/80-2/ -14 և սեպտեմբերի -ի N 06/3-3/ -14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի -ի N 02/ -14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի սեպտեմբերի -ի ՖԲ/ԱնՄ-4/ -14 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2014 թվականի սեպտեմբերի -ի N 01/10.1-1/ -13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աղոնցի 15, բն. 20, ՀՎՀՀ՝ 01003187) իրականացվող՝ 14,496,500 դրամ արժողությամբ «Տավուշի մարզի Բերդավան համայնքի մշակութային տան դռների և պատուհանների փոփոխում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՄՄՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02214638) 2014 թվականի հունիսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դռների և պատուհանների պատրաստում և տեղադրում՝ 7,085,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

Հր. 10/4

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

Հաստատված է
«Կամրջակ» ՍԲՀԿ
տնօրեն Բ. ԱՂԱՄԱԼՅԱՆԻ կողմից
«29» Օգոստոս 2014 թ

# Տավուշի մարզի Բերդավան համայնքի մշակութային տան դռներ և լուսամուտների փոփոխման ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Տավուշի մարզի Բերդավան համայնքի մշակութային տան դռներ և լուսամուտների փոփոխում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնությունից |
| 3. | Բարեգործը | Վիլդե Գանզեն ՀԿ (WILDE GANZEN) Heuvellaan 36-1217JN Hilversum -NEDERLAND |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Կամրջակ »ՍԲՀԿ-ն, իրավաբ հասցե՝ Ք. Երևան, Զ.Քանաքեռցու 129/5, ՀՎՀՀ 01003187, Հեռ՝ 516-044, Ֆաքս՝ 56-13-03 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն Տավուշի մարզի Բերդավան համայնք, բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընհանուր բյուջեն կազմում է 14,496,500 (Տասնչորս միլոն չորսհարյուր իննսուն վեց հազար հինգ հարյուր) դրամ: Վիլդե Գանզեն ՀԿ-ի միջոցներ՝ 12,496,500 դրամ և Բերդավան համայնքի միջոցներ՝ 2,000,000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Տավուշի մարզի Բերդավան համայնքը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014 թվականի Հունիսի 30-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 29-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Նախագծա նախահաշվարկային փաստաթղթերի կազմում և տրամադրումը, որպես համայնքի ներդրում կատարվել է համայնքի կողմից: Համայնքի կողմից ներդրումը կազմում է 2000000 (երկու միլոն ) դրամ, որի համար հարկային արտոնություններ չի ակնկալվում , նախագծանախահաշվարկային փաստաթղթերի կազմումը արժեցել է 800.336 դրամ որը վճարվել է համայնքի կողմից , իսկ մնացածորդ 1.199.664 (մեկ միլոն հարյուր իննսուն ինը հազար վեց հարյուր վաթսուն չորս) դրամը կծախսվի շինարարական աշխատանքների համար: Վիլդե Գանզեն ՀԿ-ի տրամադրված միջոցները՝ 12,496,500 դրամ(ակնկալվում է հարկային արտոնություն, որից շենքի արտաքին և ներքին դռներ և լուսամուտների փոփոխման համար «ՄՄ»ՍՊԸ-ի հետ կնքվել է կապալի պայմանագիր 7085000(յոթ միլիոն ութսուն հինգ հազար) դրամ առանց ԱԱՀ-ի , իսկ 5,411,500 դրամ ծախսվելու է դռներ և լուսամուտների տեղադրումից հետո շինարարական լրացուցիչ աշխատանքների կատարման համար: Աշխատանքները իրականացվելու են 2014 թվականի Հունիսի 30-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 29-ը: |
| 10. | Ձեռք բերվող(ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Դռներև լուսամուտների փոփոխման համար կնքվեու է կապալի պայմանագիր «ՄՄ»ՍՊԸ-ի հետ 7,085,000(յոթ միլիոն ութսուն հինգ հազար) դրամ առանց ԱԱՀ-ի: Համայնքի ներդրմամբ վճարվել է 800.336 դրամ նախագծա նախահաշվարկային փաստաթղթերի կազելու համար: Մնացորդ 6,611,164 (վեց միլոն վեցհարյուր տասնը մեկ հազար հարյուր վաթսուն չորս) դրամը ծախսվելու է պատուհանգոքերի տեղադրման, պատուհանների և դռների տեղադրումից առաջացած լրացուցիչ շինարարական աշխատանքների համար |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում : |
| 12. | Համագործակցությունը,պետական կառավարման ,տեղական ինքնակառավարման մարմինների,այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացվում է «Կամրջակ» ՍԲՀԿ-ի կողմից համագործակցելով Տավուշի մարզի Բերդավան գյուղի գյուղապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է համայնքի ղեկավարի կողմից, իսկ աշխատանքները կատարելուց հետո, սահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կներկայացվի հաշվետվություն |

«Կամրջակ»ՍԲՀԿ-ի տնօրեն Բենյամին Աղամալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

9.09.14 № 07/80-2/13986-14

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 03.09.2014թ. N 15/15.1/14522-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Տավուշի մարզի Բերդավան համայնքի մշակութային տան դռների և պատուհանների փոփոխում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

934/27606-14

Կատարող՝ Ն. Կարապետյան,
հեռ. 011-91-05-49

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078, Երևան, Հալաբյան 41ա, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

8.09.14 N 01/6671-14

Ձեր N ____________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 3-ի 15/15.1/14522-14 թվակիր հանձնարարականի հայտնում ենք, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Տավուշի մարզի Բերդավան համայնքի մշակութային տան դռների և լուսամուտների փոփոխում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ.՝ (010) 380-227

035/27425-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Ժ.10/4

« 5 » 09 2014 թ. N ՖԲ/Աե-4/

Ձեր 2014-09-03, 15/15.1/14522-14

Ժ22-14

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով ««Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ՀՀ Տավուշի մարզի Բերդավան համայնքի մշակույթի տան դռների և պատուհանների փոփոխում» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

010/27289-14

Կատարող՝ Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչություն 581-680

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am

---

Ժ.10/4

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

06/3-3/13643-14
5.09.14

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 03.09.2014թ. թիվ 15/15.1/14522-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Տավուշի մարզի Բերդավան համայնքի մշակութային տան դռների և լուսամուտների փոփոխում » ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544648

034/27249-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
**ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐԶՊԵՏ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ТАВУШСКАЯ ОБЛАСТЪ
**ГУБЕРНАТОР**

REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
GOVERNOR

Mr. 10/4

4001, ՀՀ ք. Իջևան Սահմանադրության 1, РА, г, Иджеван Сагманадрутян 1, RA, Ijevan Sahmanadrutyan 1
հեռ.тел.phon. /0263/ 4-00-45, 3-23-56 Ֆաքս՝ /факс , fax / /0263/ 4-00-45
E-mail: tavush@mta.gov.am ***Կայք*** *WEB* *http://tavush.gov.am*

01/12.2/3423-14
8.09.14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Տավուշի մարզի Բերդավան համայնքի մշակութային տան դռների և պատուհանների փոփոխում» որոշման նախագիծը քննության է առնվել Տավուշի մարզպետարանում և արժանացել հավանության: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի համաձայն չենք առարկում սույն ծրագիրը բարեգործական որակելու և հանձնաժողովի կողմից համապատասխան որոշում կայացնելու համար:

Հարգանքով՝

Հ. ԱԲՈՎՅԱՆ

Կատ. Մ.Մխիթարյան

119/27492-14

**ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**սեպտեմբերի 2014 թվականի N Մ- -Ա** Mr. 10/5
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ, ՋԻԼԻԶԱ ԵՎ ԿԱՃԱՃԿՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի -ի N 07/80-2/ -14 և N սեպտեմբերի -ի 06/3-3/ -14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի -ի N 02/ -14, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի սեպտեմբերի -ի N 03/-14 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2014 թվականի սեպտեմբերի -ի N 101/104.3/ -14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2,116,558 դրամ ընդհանուր արժողությամբ «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա, Ջիլիզա և Կաճաճկուտ համայնքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ռոս Պլաստ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00651907) 2014 թվականի սեպտեմբերի 4-ին կնքված N WVA/ALAV ADP/CM-14/002/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 2,116,558 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրեն՝
Ծիրայր Էդիլյան
4 սեպտեմբերի 2014թ.

«Շինարարական նյութերի մատակարարում ՀՀ Լոռու մարզի Ախթալա, Ջիլիզա և Կաճաճկուտ համայնքներին»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է շինարարական նյութեր տրամադրել ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքին՝ աղբարկղերի պատրաստման, Ջիլիզա և Կաճաճկուտ համայնքներին՝ ջրագծերի երկարացման և վերանորոգման նպատակով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
